

**Հայաստանի վավերացման գործընթացը**  
Ի պատասխան ԲՇԽ արձագանքին  
«CowaterSogema» անկախ վավերացնողի կողմից  
20 մայիսի, 2020 թ.

Վավերացնողը ցանկանում է շնորհակալություն հայտնել Հայաստանի ԲՇԽ-ին՝ առաջընթացի վերաբերյալ նրանց օգտակար արձագանքի և թարմացումների համար: Հետևյալը վավերացնողի պատասխանն է ԲՇԽ-ի արձագանքին:

**Պահանջ 1.3. Քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը**

Վավերացնողը շնորհակալ է ԲՇԽ-ի կազմում քաղաքացիական հասարակության ընտրողների մասին թարմացված տեղեկատվության համար (5 անդամ և 2 փոխարինող):

**Պահանջ 1.4: ԲՇԽ-ի կառավարում**

Վավերացնողը շնորհակալ է այն թարմացման համար, ըստ որի քարտուղարությունը 2020թ. փետրվարից երեք աշխատակից ունի:

**Պահանջ 2.5: Իրական սեփականության բացահայտում**

Վավերացնողը շնորհակալ է՝ տեղեկանալու սույն թվականի մարտից իրական սեփականության բացահայտմանը վերաբերող կառավարության հանձնարարականի մասին, և որ առաջին բացահայտումներն այժմ հրապարակավ հասանելի են առցանց հարթակում:

**Պահանջ 5.2: Տեղական կառավարման մարմիններ կատարվող փոխանցումները**

Վավերացնողը նշում է, որ սույն դրույթի ներքո պահանջվում է **փաստաթղթով հիմնավորել՝**

1. Սահմանադրական, օրենքի վրա հիմնված և այլ պարտադիր եկամուտների համօգտագործման պահանջները.
2. ԲՇԽ-ի կողմից առկայականության սահմանումը, որը վերաբերում է տեղական կառավարման մարմիններին արվող պարտադիր փոխանցումներին.
3. Տեղական կառավարման մարմիններին արվող նյութական փոխանցումների բացահայտումը.
4. Եկամուտների համօգտագործման բանաձևի, ինչպես նաև փաստացի գումարի չափի բացահայտում, որը փոխանցվել է կենտրոնական կառավարության և յուրաքանչյուր համապատասխան տեղական կառավարման մարմնի միջև:

Վավերացման ուղեցույցները սահմանում են, որ այն պետք է ապացուցի, որ պահանջի բոլոր հայեցակետերն իրականացվել են, և որ պահանջի ավելի ընդանուր նպատակն իրականացվել է:

Վավերացնողը նշում է, որ անկախ ադմինիստրատորի իրավասության շրջանակների հավելված 1-ում առարկայականության սեմն արդյունավետ կերպով գրո է սահմանում, քանի որ շրջակա միջավայրի համար բոլոր տեղական կառավարման մարմիններին կատարվող վճարումները պետք է ի նկատի առնվեն:

Վավերացնողը նաև նշում է, որ Հայաստանի ԲՇԽ-ն նաև արձագանքել է համապատասխան ուղղիչ գործողություններին՝ բացահայտելով այն հիմքերը, որոնք անհրաժեշտ են՝ հաշվարկելու շրջակա

Վիճավայրի համար անհրաժեշտ ընդհանուր գումարի չափը, որը պետք է կրկին բաշխվի համայնքներին, ինչպես նաև դրա հետևանքով առաջացած գումարի չափը՝ 2016-2019թթ. համար, ինչպես նաև բացահայտել յուրաքանչյուր համայնքի համար տնտեսված գումարի չափերը և փաստացի գումարների մասին զեկույցները:

Այս նոր փաստի լույսի ներքո վավերացնողն առաջարկում է, որ ԱճԹՆ վավերացման խորհուրդը քննարկի սույն պահանջը բավարար աստիճանի թարմացնելու հարցը:

### **Պահանջ 6.1: Սոցիալական ծախսեր**

Սույն դրույթը պահանջում է ԲՇԽ-ի առարկայականության սահմանման փաստաթղթերով հաստատումը, որը վերաբերում է պարտադիր սոցիալական ծախսերին: Նաև ակնկալվում է, որ վավերացնողը հաստատի բացահայտումը, համաձայնեցումը, ներառյալ նյութական սոցիալական ծախսերի որևէ բացթողում:

ԲՇԽ-ն իր արձագանքում լրացուցիչ տեղեկություններ է տրամադրում, բայց դրանք ուղղակիորեն չեն առնչվում վերոնշյալ առարկայականության պահանջներին, որոնք կարևոր տարրեր են՝ սույն դրանք պահանջի բավարար համապատասխանության տեսանկյունից քննարկելու համար:

Սակայն, վավերացնողը նշում է, որ անկախ ադմինիստրատորի իրավասության շրջանակների հավելված 1-ում առարկայականության սեմն արդյունավետ կերպով զրո է սահմանում, հետևաբար բոլոր սոցիալական վճարումները պետք է ի նկատի առնվեն:

Բացի այդ, վավերացնողը նշում է, որ նախատեսվող ուղղիչ գործողությունների հետ մեկտեղ Հայաստանն այժմ բացահայտել է 2016-2018թթ. երրորդ կողմի շահառուների նույն տեսակի սոցիալական ծախսերի և տեղեկությունների բնույթը:

Սույն նոր փաստի լույսի ներքո վավերացնողն առաջարկում է, որ ԱճԹՆ վավերացման խորհուրդը քննարկի սույն պահանջը բավարար աստիճանի թարմացնելու հարցը:

### **Պահանջ 7.2: Տվյալների հասանելիություն**

Վավերացնողը ողջունում է GIZ-ի կողմից աջակցվող ֆինանսական տվյալների վերլուծությանը նվիրված դասընթացին վերաբերող նորությունները: